

«ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԵՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ» : ԶՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Ե.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒԼԻՍ 1. 1876.

ԹԻ 7




«ԱԻՆԸ, ՀԱՐԻՆ ՓՈՐԻՆ ՄԷՋ ՈՍԿԻ ԶԿԱՐ»

ՈՍԿԻ ՉՈՒ ԱՅՈՂ ՀԱՒԸ

Սարգիս թմբուկ մը ունէր, և ամէն առաւօտ մինչև դպրոց երթալու ժամանակ, և ամէն գիշեր պառկելու ժամանակ թմբուկը կը զարնէր: Արդարև Սարգիս թմբուկի ձայնէն շատ կ'ախորժէր: Օր մը ուզեց իմանալ թէ թմբուկի քայցը ձայնն ուսկից կուգայ: Այս բանը տեսնելու համար Սարգիս խոհատունը գնաց, և, առանց բան մը ըսելու իր մօրը, մեծ դանակ մը առնելով թմբուկին ճերմակ կաշին կտրեց և անոր մէջը բան մը չգտաւ: Սարգիս շատ զարմացաւ, երբ տեսաւ որ իր թմբուկին մէջ բան մը չկար: Թմբուկը ձեռքն առաւ և չպատած անդէն սկսաւ զարնել, որպէս զի տեսնէ թէ ձայնն ուսկից կու գայ: Սակայն թմբուկին որչափ ալ զարկաւ, այն անուշ ձայնը չելաւ: Շատ ջանաց թմբուկին ձայնը հանել, բայց տեսաւ որ ձայնը փախած էր, և թմբուկն այլևս բանի չէր գար: Սարգիս, ինչպէս փորը տղոց սովորութիւնն է, նստաւ և սկսաւ լալ: Քիչ մը ետքն անոր մայրը լսելով որ Սարգիս սաստիկ կուլար, և լալէն մարելու աստիճան հասած էր, եկաւ որպէս զի հասկնայ թէ ինչ եղած է: Մայրն երբ տեսաւ որ թմբուկն պատուած է, և Սարգիսն իմանալով թէ ինչու համար այնպէս ըրած է, ըսաւ. «Սարգիս, հիմա ժամանակ է որ սորվիս չխառնուիլ այնպիսի բաներու որ չես հասկնար, և այս դէպքը քեզ պիտի սորվեցնէ տոյն դասը»: Այնուհետև մայրն իր տղան հանդարտեցնելու համար մեծ գիրք մը բանալով անոր մէջի պատկերները ցուցնել սկսաւ: Այն գրքին մէջի պատկերներէն մին այս թմբուկին առաջին երեսի պատկերն էր, և Սարգիսին մայրն հետևեալ պատմութիւնն ըրաւ այս պատկերին վրայով.

«Ժամանակաւ մարդ մը կար որ զարմանալի հաւ մը ունէր: Հաւը ճիշտ միւս հաւերուն կը նմանէր, բայց զարմանալի էր անոր համար, որ ամէն առաւօտ զուտ ոսկի ձու կ'աճէր: Այն մարդն իւր հաւին աճած ոսկի ձուովը շատ հանգիստ կ'ապրէր, բայց չարաչուք օր մը մարդն սկսաւ խորհիլ թէ հաւին փորին մէջ ոսկուց կոյտ մը ըլլալու է, ապա թէ ոչ, ինչպէս կ'ըլլայ որ ամէն առաւօտ պատրաստ ձու կ'ունենայ: Ապա ինքնին մտածեց

որ, եթէ հաւին փորը ոսկուց կոյտ կայ, աւելի աղէկ կ'ըլլայ ամէնը մէկէն առնել քան թէ սպասել որ հաւն ամէն առաւօտ ձու մը տայ: Ուստի որոշեց հաւին փորը բանալ և տեսնել թէ ձուն ուսկից կուգայ, և անմիջապէս իր որոշումը ի գործ դրաւ: Բայց շուտով իմացաւ թէ յիմարութիւն է խառնուիլ այնպիսի բաներու որ ինք չէր հասկնար: Հաւին փորն ոսկի չկար, և հաւը մեռած ըլլալով ալ չէր կրնար ձու աճել:»



ՋՐՍԻՆ ԲՁԻՁ

Վերի պատկերին մէջ կը տեսնուի ջրային բզէզ, որ երբեմն կը գտնուի կեցած ջուրերու մէջ: Այս միջատն օգին մէջ կը կենայ և ջուրը կը մտնէ փորը կշտացնելու համար: Անոր դպչելու չէ, վասն զի տեսակ մը հատու սուր ունի, և վարպետութեամբ զայն կը մխէ անոր ձեռքին մէջ, որ առանց գիտնալու թէ ինչպէս բռնել պէտք է այս բզէզը, կ'ուզէ զայն բռնել: Ասկէց զատ երբ բռնուի շատ անախորժ հոտ մը դուրս կուտայ: Շատակեր է, և եթէ սխալմամբ մտնէ ամանի մը մէջ ուր կարմրախայտ ձկեր կը պահուին, կրնայ ուտել բոլորը: Այս բզէզը թռչած ատեն երբ կեցած ջուրի մը վրայ գայ, թե երբ կը դոցէ և կեցած բարձր տեղէն քարի պէս զինքը ջուրին մէջ կը նետէ: Երբեմն ապակիներուն վրայ ցոլացած լուսնի լոյսը ջուր կարծելով կը խարուի, և ուժգնութեամբ կ'իջնայ ջերմանոցներ-

րուն վրայ: Այս միջատին օգ առնելու կերպն ալ շատ զարմանալի է: Գլխիվայր կ'ելլէ ջուրին երեսը, և իր պոչին ծայրը դանուած զարմանալի գործիքի մը միջոցաւ դուրս կը հանէ ներսի օդն և նոր օգ ներս կ'առնէ: Այս միջատներուն վրայ ուրիշ զարմանալի բան մը ալ ըսեմ: Անոնց աչքերը մէջտեղէն երկու մասի բաժնուած են, վերին մասը օգին մէջէն տեսնելու, իսկ վարի մասը ջուրին մէջէն տեսնելու համար է:

ՅԻՍՈՒՍԻ ԵՐԹԱՂՈՒ ՉՈՐՍ ԳԱՅԼ

Օր մը Պատ. Մարտիրոս Մարիցայէն նամակ մը առաւ, և զայն կարդալով շատ ուրախացաւ: Պատ. Մարտիրոս նամակը կարդալէն ետքն ինքն իրեն այսպէս ըսաւ. «Ահ, սիրուն աղջիկ, ես ինչ ըսեմ անոր:» Ապա սենեկին գուռը գոցելով սկսաւ աղօթել աղու մը պէս որ իր հօրմէն հարցումներ կ'ընէ, և խնդրել Աստուծմէ որ օգնէ իրեն այն աղջկան հարցմանց տալու պատասխանին մասին: Կը կարծեմ թէ Պատ. Մարտիրոս Աստուծմէ ակնկալած օգնութիւնն առաւ, և այսպէս պատասխան դրեց Մարիցայի հարցման.

«Կը հարցնես թէ 'Յիսուսի ինչպէս երթալու եմ': Անմիջապէս Յիսուսի երթալու փափաք ունենալը առաջին քայլ է: Երբ կը հասկնաս թէ մեղաւոր և վտանգի մէջ ըլլալով անոր օգնութեան կարօտ ես, երկրորդ քայլն առած կ'ըլլաս: Երբ գիտնաս թէ նա կարող և յօժար է զքեզ մեղքէ փրկելու և քեզ օգնելու, երրորդ քայլն ալ առած կ'ըլլաս: Հուսի յետոյ երբ աղօթք կ'ընես Յիսուսի որ քեզի համար ընէ ինչ որ չես կրնար դուն քեզի համար ընել, չորրորդ քայլն ալ առած կ'ըլլաս: Ահա Յիսուսի երթալու համար չորս քայլ: Ալ ուրիշ չկայ: Թե երես ըսելու էի թէ միայն մէկ քայլ մը կայ, այն ալ շատ կարճ: Մեղաւորը սրտին խորէն կ'աղօթէ և կ'ընէ. 'Աստուած սղորմէ ինձի մեղաւորիս', և անոր հոգին այս աղօթքին թե երուն վրայ կը թռչի առ Յիսուս: Փրկչին երթալու համար կարճ, դիւրին և միակ ճամբան այս է: Խցիլ թէ սիրելի Մարիցաս ալ այսպէս գտնէր:»

Մարիցա այս նամակը կարդալէն ետքը ըսաւ. «Ինձ կը թուի թէ ինձի պէտք եղածը երրորդ քայլն է, քանզի առաջին, երկրորդ եւ չորրորդ քայլերը փորձեցի: Հիմա կը հաւատամ նաև թէ, ան կարող և յօժար է դիւ մեղքէ փրկելու:»

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՆ

Մեր ընթերցողները կը յիշեն այն աղքատ այրույն պատմութիւնը, որ իր չքաւոր վիճակին մէջ գանձանակը ձգեց բոլոր իր ունեցածը, որ էր երկու լումայ: Եւ Յիսուս անոր համար ըսաւ. «Աս աղքատ որբւարին ամենէն աւելի ձգեց»: Յիսուս ոչ թէ նուէրը շատ ըլլալուն, այլ աղքատ կնոջ բրած զոհողութեան նայելով ըսաւ այն խօսքը:

Կան մտադիկ որ փոքր նուէրներ կը ձգեն գանձանակը և իրենց այն նուէրը կը կոչեն «Այրի կնոջ լուման»: Իբր թէ այրի կինը քիչ տալուն համար գովուեցաւ: Այնպիսի մտադիկ մեծապէս կը սխալին եթէ կը կարծեն թէ իրենք ալ այն աղքատ որբւարիին կը նմանին, վասն զի քիչ կու տան:

ՄԱՐԳԱՐԻՏ ԻՐ ՄՕՐԸ ՀԱՃՆԻ ԸՂԱՍԻ ԿԸ ՋԱՆԱՅ

Գայիտոս ածապարանօք մտաւ սենեակին, ուր իր երկու քոյրերն իրենց պէպէքներովը կը խաղային: «Մայրիկս ո՞ր է?» հարցուց Գայիտոս:

«Մայրիկս» պատասխանեց քոյրերէն մին, «իր սենեակն է և մաքուր զգեստներ կը պատրաստէ պէպէքին համար»: Այս միջոցին մայրն ալ ներս մտաւ: Գայիտոս զուարթ դիմօք և վառվառուն աչքերով մօրն ըսաւ. «Մայրիկ, Արմաւենի տիկինը մեզ հրաւիրած է իրեն հետ Գոյապաշիի աղբուրն երթալ: Մեզի ամէնքս ալ հրաւիրած է. կըրնանք երթալ»: «Մայրը մէկէն չպատասխանեց: Տըզան սկսաւ շարունակել. «Արմաւենի տիկինը սայլ մը վարձած է, և սայլին տակը խոտ գնել տուած է, անոր տղայն և մեր ամենուն համար ալ սայլին մէջ տեղ կայ: Արմաւենի տիկինը նաև շատ մը համեղ ուտելիք դրած է ծրարի մը մէջ, և աղբուրն քովը ծաւերուն տակը գեղեցիկ տեղ կայ նստելու և կերակուր ուտելու: Արմաւենի տիկինը կըսէ նաև թէ, չմթնցած պիտի դառնանք: Մայրիկ, հրաման կուտաս մեզի երթալու:» «Այո, հրաման կուտամ» ըսաւ մայրը. «բայց ամէնքդ խիտին չէք կրնար երթալ: Ես այսօր հիւանդ կին մը

տեսնելու պիտի երթամ, և Մարիամ չկրնար թոմիկին և պէպէքին միանգամայն նայիլ, վասնզի ճերմակեղէնները պիտի լուանայ: Չենէ մէկը տունը մտալու է:» Այս միջոցին Մարգարիտ Եսթերին և Եսթեր Մարգարիտի նայիլ սկսան, և Գայիտոս ածապարելով կըսէր իր քոյրերուն. «Օն, շուտ որոշեցէք, ո՞վ հոս պիտի մնայ և ո՞վ պիտի երթայ. Արմաւենի տիկինն և անոր տղայքը մեզ կըսպասեն»: Եսթերի աչքերն արտասուօք լեցուել սկսան, վասնզի այսպիսի պարագաներու մէջ զրեթէ միշտ ան կը դիմանէր: «Բայց Մարգարիտին մտքին մէջն ալ կուր մը բացուեցաւ, և վերջապէս անոր աչիւ զգացմունքն անձնասի-

ճերմակեղէնները փութու, և ըսաւ. «Մարգարիտ, դուն ինչո՞ւ միաներուն հետ չգացիր. միթէ չարութիւնն ըրիր:» Մարգարիտ ցաւ զգաց որ Մարիամ այսպիսի խորհուրդ մը ունեցաւ իր վրայով, և ըսաւ. «Ոչ, ես բարի աղջիկ եմ, թոմիկին և պէպէքին նայելու համար հոս մնայի:» Մարիամ ասոր վրայ ուրախութիւն յայտնեց, թոմիկն ալ ուրախացաւ, և Մարգարիտ սկսաւ ուրախանալ: Թոմիկ Մարգարիտէն խնդրեց որ քանի մը պատմութիւն պատմէ: Մարգարիտ անոր պատմեց զարմանալի պատմութիւն մը զոր ծեր կնիկէ մը լսած էր, և ըսաւ թէ երկրի մը մէջ մկները շատ խոշոր էին, և կատուները չէին կրնար զաննք բռնել, և հոն դրումները խնձորենիներու վրայ կը բուսնէին, և հովիտ առնել իրարու զարնուելովը որոտման պէս ձայն կը հանէին: Թոմիկ այս պատմութեան շատ զարմացաւ: Այնուհետև Մարիամ զնաց անոնց չաքարով եփուած սիմիտ բերաւ: Մարգարիտ և Թոմիկ սկսան խաղ խաղալ ձեւայնելով թէ անապատի մը մէջ ճամբորդներ են, և թէ անոնց միայն մէկ մէկ սիմիտը մնացած է, այնպէս որ հազիւ փոքրպատուներ կրնան ուտել երբ կ'անօթենան: Պէպէքն ար-



ԱՆՈՐ ՔՈՎ ՍԵՒ ԵՈՒՆ ՄԸ ԿԵՅՄ ՀԱՅԷՆ ՄԱՍ Կ'ՈՒՋԷ

լութեան յաղթեցին, ու Մարգարիտ կըցաւ ըսել. «Ես տունը կը մնամ, և պէպէքին ու Թոմիկին կը նայիմ»: «Մարգարիտս բարի աղջիկ է», ըսաւ մայրն և զայն համբուրեց: Գայիտոս և Եսթեր Արմաւենի տիկինը հետ դացին. մայրն ալ հիւանդ դրացինը տեսնելու գնաց, և Մարգարիտ առանձին մնաց: Առջի բերան Մարգարիտին սիրտը նեղուեցաւ և քիչ մնաց որ պիտի լար, բայց նա ջանաց այս նեղադարձութեան առջին առնել: Ելաւ, պարտէզը գնաց. հոն տեսաւ որ Թոմիկ նստած հաց կ'ուտէ, և անոր քով սև շուն մը կեցած անոր հացէն իրեն ալ մաս կ'ուզէ: Այս միջոցին Մարիամ պարտէզն եկաւ լուայած

թնցաւ և Մարգարիտ զանի շալակն առնելով պտըտցուց, պէպէքն ասոր վրայ շատ խնդաց, Թոմիկ ալ խնդաց, Մարիամ ալ խնդաց և այնպիսի ուրախալի ժամանակ անցուցին որ Մարգարիտ բոլորովին մոռցաւ Գոյապաշիի գէպքը, և չէր գիտեր թէ ինչպէս օրն անցած և գիշեր եղած էր: Ահա այս ուրախութեան մէջ լսեցին սայլակին ձայնը, որ Գայիտոս ու Եսթերը կը բերէր: Քիչ մը ետքն անոնց մայրն ալ հիւանդ դրացոյն տունէն դարձաւ և շատ գովեց Մարգարիտը, Մարգարիտ ալ շատ երջանիկ եղաւ: Մարգարիտ փորձով հասկցաւ թէ մօրը հաճելի ըլլալը շատ դժուար բան չէ:



ԲՈՒԼԻՄՐ ԿՈՒՌՔԸ

Վերի պատկերը Հնդկաց մէկ կուռքին պատկերն է: Այս կուռքը հարաւային Հնդկաստանի մէջ Բուլիար, այսինքն իմաստութեան չաստուած, և հիւսիսային Հնդկաստանի մէջ Կանչա կ'անուանուի: Այս կուռքը թէ աթոռի վրայ նստած ըլլայ, ինչպէս է այս պատկերին մէջ, և թէ փոքր մեհենի մը վանդակադատ դրան մէջտեղ քարի մը վրայ թառած ըլլայ, կամ ճամբուն վրայ ցեխոտ և իւղոտ ձգուած ըլլայ, իր փղի գլխովն և կնճթովն միշտ կը ճանչցուի: Թէ մեհենի մէջ ըլլայ, և թէ ճամբուն վրայ կանդնուած ըլլայ, բարեպաշտ Հնդկի մը երբ անոր առջևէն կ'անցնի, իր բազուկները տարածելով անոր երկրպագութիւն կ'ընէ: Այս կուռքն է որ Հնդկաստանի դպրոցաց պաշտպան կը համարուի: Աչքերնուդ առջև բերէք անգամ մը այն Հնդկի տղաքը որ Բարձիր կոչուած ծառին տերեւներէն շինուած իրենց դասադրքերը ուսերէն ի վար կախելով դպրոց կ'երթան, և ճամբան յանկարծ իրենց խօսակցութիւնը դադարեցնելով երկրպագութիւն կ'ընեն վերի պատկերին պէս անհեթեթ պատկերի մը: Այս կուռքը կը գրուի նաև դպրոցաց մէկ անկիւնը, և ամէն տղայ դպրոցէն ներս մտնելուն պէս նախ կ'երթայ զայն կ'ողջունէ: Տղայ մը որ թուարանութեան դաս կ'առնէ, նախ աղօթք կ'ընէ կուռքին որ իրեն օգնէ սորվելու և միտքը պահելու իր դասը:

ԳԵՂԵՅԻԿ ԶՆՈՒՔԵՐ

Շուշան օր մը Աղաւնի տիկինը ըսաւ, «Մարիամին ձեռքերն ինչ կոչտ և տգեղ են»: Աղաւնի տիկինն ըսաւ. «Եթէ ինձ հարցուի, Մարիամին ձեռքերը շատ գեղեցիկ են»: Շուշան ը-

սաւ. «Ինչո՞ւ այդպէս կ'ըսես: Մարիամին ձեռքերն երբէք տեսած չե՞ս. սրչափ կարծր և կարմիր են, և որչափ տգեղ պիտի երևին եթէ Մարիամ դաշնակ զարնէ»: Աղաւնի տիկին շուշանի ձեռքերն իր ձեռաց մէջ առնելով այսպէս ըսաւ անոր. « Այո, Շուշան, քու ձեռքերդ կակուղ և սպիտակ են, նաև գեղեցիկ կ'երևին, երբ դուն դաշնակ կը զարնես: Մակայն Մարիամին ձեռքերն ուրիշ գեղեցկութիւն մը ունին, զոր քու ձեռքերդ չունին: Կ'ուզե՞ս որ քեզ ըսեմ ինչ է Մարիամի ձեռքերուն գեղեցկութիւնը: Մարիամին ձեռքերը միշտ գործով զբաղեալ են: Այն ձեռքերը կերակուրի պնակները կը լուան, կրակ կը վառեն, ձերմակեղեններ լուալու կ'օգնեն, հանդերձներուն վրայէն ցեխերը կը մաքրեն, հաց կեփեն, սենեակները կը լուան, կար կը կարեն, վերջապէս Մարիամայ ձեռքերը միշտ կ'օգնեն անոր թշուառ մօրը»: Շուշան ըսաւ. «Ես այդ մասին բնաւ չիտրհեցայ»: Իսկ աղաւնի տիկին այսպէս շարունակեց. «Մարիամայ ձեռքերն միշտ աղէկութիւն կ'ընեն ամենուն: Այն ձեռքերը կը գզուեն փողոցի շինիկ և ձիւն, և պատրաստ են օգնութիւն ընելու անոնց որ կարօտութեան մէջ են: Մարիամին ձեռքերը օտքի վրայ կը հանեն փոքրիկ տղայ մը որ քալած ատեն փողոցին մէջ կ'իջնայ, նաև հաց կու տան այն աղքատ ծերուկին որ կը մուրայ: » Շուշան թագուհի տիկինը այս խօսքերուն վրայ ըսաւ. «Այսուհետև ալ Մարիամին ձեռքերը տգեղ պիտի չհամարիմ: » Աղաւնի տիկին ալ անոր ըսաւ. «Աղէկ ըսիր, Շուշան, քանզի Մարիամին ձեռքերը աւելի գեղեցիկ են անոր համար, որ ամէն ծառայութիւն և գործ սիրով կը կատարեն ի սէր Յիսուսին, որոյ ձեռքերը մեզի համար խաչին վրայ դամուկեցան: »

ԱՌՍԶԻՆ ԱՐՍՏԸ

Մեր մանուկ ընթերցողները կը խորհին արդեօք թէ որչափ փոքր բան կրնայ անոնց բնաւորութիւնն արատաւորել: Կաթիլ մը մեղմը շատ փոքր բան է, բայց եթէ աման մը մաքուր ջուրի մէջ թափուի, ջուրը կը պղտորէ: Այսպէս առաջին երգումը, առաջին սուտը, ոգեկից բնույթեաց

առաջին բաժակը թէև ջնջին բաներ կ'երեւին, սակայն ձեր բնաւորութեան վրայ սեւ արատ մը կը թողուն: Արատէն զգուշացէք:

ԵՐԱՆՏԱԳԷՏ ԿՈՎ ՄԸ

Անդղիոյ մէջ կին մը կով մ'ունէր, զոր միշտ կը գզուէր և կը փայփայէր, Օր մը կովը տեսնելով որ այրը կինը կը ծեծէր, բարկացաւ, և զայրացմամբ վազեց էրկան վրայ և զանի կնոջ քովէն փախուց: Ապա գնաց կնոջ քով նստաւ և զայն պաշտպանեց:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԿԱԳԱՅՈՂ ՓՈՔՐ ՏՊԱՅՈՑ ՀԱՄԱՐ ՊՍՏՄՈՒԹԻՒՆ

Մեծ և բարի թագաւոր մը մահացու հիւանդութեան մը բռնուեցաւ: Ախարն առջին առնուելու համար ձեռք առնուած ամէն դարման պարագն ելաւ, և թագաւորն խորհեցաւ թէ իր օրերը համրուած են, թագաւորը մեծահաւատ մարդ էր, բայց կը փափաքէր քանի մը տարի ևս ապրիլ: Անկողնոյն մէջ պառկած ատեն երեսը դէպ ի պատը դարձուց, արաստուօք և հեծութեամբ աղօթք ըրաւ Աստուծոյ որ յիշէ իր անարատ կեանքն, և քանի մը տարի ևս ինայէ իրեն: Քանի մը վայրկեան ետք Տէրով մէկ մարդարէն եկաւ և ըսաւ հիւանդին թէ անոր աղօթքն ընդունելի եղաւ Աստուծոյ առջև, և Աստուած անոր խնդիրը կատարեց: Մարդարէն ըսաւ նաև թէ հիւանդ թագաւորն անծանօթ դեղ մը գործածելով պիտի առողջանար և տան և հինգ տարի ալ պիտի ապրէր: Այս թագաւորին անունն ի՞նչ էր, մարդարէն անունն ի՞նչ էր: Այս պտտմութիւնը Սուրբ զրոց որ մասին մէջ կը գտնուի:

Անցեալ ամսուան Աւետարեղին մէջ ցուցուած ոսկրներուն պատկերն էր այն առիւծին պատկերը, զոր Սամսոն սպաննեց և որուն մէջ մեղունները մեղր շինեցին:

Ամերիկայի միսինարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ճ. Ք. Կրին

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՍԵՆ
Չազմագեղար, Յակոբեան խան, Թիւ. 12